

## ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ Հարավային Կովկասի չճանաչված պետությունների միջազգային ինտեգրման հնարավորությունները

### ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան

Հռոլվածում ուսումնասիրվում են չճանաչված պետությունների միջազգային ինտեգրման հնարավորություններն ու այդ գործընթացի վրա ազդող հիմնական գործոնները: Փորձ է արվում ներկայացնել Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի ինտեգրման հնարավորությունները կամ ինտեգրման միավորումների հետ հնարավոր համագործակցության հեռանկարները: Ինտեգրման միավորների՝ հակամարտությունների կանխարգելման, կարգավորման հարցում ունեցած դերակատարությունն ու արդյունավետությունը դեռևս ոչ միանշանակ է և, որոշ դեպքերում, առավելապես ոչ արդյունավետ: Այնուամենայնիվ, չճանաչված պետությունների՝ ինտեգրման միավորների հետ ակտիվ համագործակցությունը կարող է արդյունավետ լինել հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերների հաղթահարման տեսանկյունից, սակայն չի կարող որոշիչ լինել չճանաչված պետության միջազգային ճանաչման համար: Ներկայացված են նաև Կոսովո-ԵՄ ակտիվ համագործակցության ու հնարավոր ինտեգրման գործընթացի առանձնահատկությունները, դրա ազդեցությունը ճանաչման գործընթացի վրա, ինչպես նաև առկա փորձի կիրառման հնարավորությունները Հարավային Կովկասի դե ֆակտո պետությունների համար:

#### Բանալի բառեր

Ինտեգրում, չճանաչված պետություն, հետկոնֆլիկտային փուլ, ԵՄ, Կոսովո, Լեռնային Ղարաբաղ, Հարավային Օսիա, Աբխազիա:

#### Նախաբան

Հռոլվածի նպատակն է վերլուծել չճանաչված պետությունների ինտեգրման հնարավորություններն ու առանձնահատկությունները՝ որպես օրինակ դիտարկելով Կոսովոյի, Լեռնային

Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի դեպքերը: Թեև որոշ ժամանակ միջազգային հարաբերությունների բնագավառում նախընտրում էին չանդրադառնալ չճանաչված պետություններին կամ դիտարկել միայն դրանց հետ կապված հակամարտությունների կարգավորման խնդիրները, սակայն վերջին մեկ և կես տասնամյակում թե գիտական, թե քաղաքական շրջանակները զգալիորեն ակտիվացրել են անդրադարձները դրանց ձևավորման, կայացման ու ճանաչման գործընթացներին, ինչպես նաև վերջնական կարգավիճակին առնչվող խնդիրներին, քանզի այդ պետություններն ազդում են քաղաքական զարգացումների վրա: Չճանաչված պետությունների մի մասին հաջողվել է ստեղծել համեմատաբար արդյունավետ պետական կառավարման ինստիտուտներ, ընդ որում, որոշ դեպքերում շատ ավելի ժողովրդավարական, քան մետրոպոլիայի ինստիտուտները: Այդ պետություններն ապացուցել են իրենց կենսունակությունը՝ պետականաշինության գործընթացում գրանցելով բավական լավ արդյունքներ: Այնուամենայնիվ, չճանաչված պետություններում օրակարգային խնդիրների շարքին են դասվում տնտեսական զարգացման ու կայունության ապահովման հետ կապված խնդիրները, որոնց լուծումը բավական բարդ է շրջափակման, ռազմական գործողությունների չդադարեցման, փախստականների ու ներքին տեղահանված անձանց հետ կապված խնդիրների առկայության պայմաններում և այլն: Եվ այս ամենն այն պարագայում, երբ համագործակցային մթնոլորտի ձևավորումն ու ֆինասական-տնտեսական կայուն հեռանկարի առկայությունը կարող է հակամարտությունների կարգավորման իրատեսական հնարավորություններ ստեղծել: Միջազգային ինտեգրումը կամ ինտեգրման ունիվերսալ ու տարածաշրջանային միավորումների հետ համագործակցությունը կարող է նպաստել ոչ միայն հետկոնֆլիկտային բարդ ու երկարատև փուլի մարտահրավերների հաղթահարմանը, տնտեսական կայունության ու զարգացման ապահովմանը, այլ նաև իր ուրույն ազդեցությունը կարող է ունենալ պետության միջազգային ճանաչման գործընթացում: Այս առումով առավել քան

հետաքրքրական է Կոսովո-ԵՄ ինտեգրման գործընթացի ու համագործակցության փորձի ուսումնասիրությունը՝ որպես յուրօրինակ «նախադեպ» չճանաչված պետության և ազդեցիկ միջազգային կառույցի արդյունավետ փոխգործության դրսևորում: Ուստի հողվածում փորձ է արվում վերլուծել Կոսովոյի՝ ԵՄ ինտեգրման գործընթացի հիմնական ուղենիշներն ու առանձնահատկությունները, ճանաչման գործընթացի վրա հնարավոր ազդեցություններն ու կապերը, ինչպես նաև Կոսովոյի ինտեգրման փորձի կիրառելիության հնարավորությունները Հարավային Կովկասի չճանաչված պետությունների դեպքում:

### **Չճանաչված պետությունների առանձնահատկությունները**

Չճանաչված պետությունները, որոնք հայտնի են նաև որպես «քվադրի պետություններ» կամ դե ֆակտո պետություններ, այսօր աշխարհում գոյություն ունեցող այն ավելի քան 20 քաղաքական միավորներն են, որոնք չունեն միջազգային ճանաչում, չեն հանդիսանում Միավորված ազգերի կազմակերպության անդամ և քաղաքական քարտեզի վրա հայտնվել են Սառը պատերազմի ավարտից հետո<sup>1</sup>: Ժամանակակից միջազգային համակարգում չճանաչված պետությունների օրինակները բազմաթիվ են՝ Կոսովո, Աբխազիա, Հարավային Օսիա, Հյուսիսային Կիպրոս, Լեռնային Ղարաբաղ, Սոմալի, Մերձդնեստր և այլն:

Դե ֆակտո պետություններն ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ առանձնահատկություններ՝ կապված ծագման պայմանների, արտաքին դերակատարների (ավելի հաճախ գերտերությունների) աջակցության, պետության ստեղծման ներքին ջանքերի, ոչ միայն մետրոպոլիայի, այլ նաև, մասամբ, միջազգային հանրության կողմից թշնամանքի բարձր մակարդակի և այլ

<sup>1</sup> O'Loughlin J., Kolossov V., Toal G., Inside Abkhazia: Survey of Attitudes in a De Facto State, *Post-Soviet Affairs*, 2011, 27, 1, 1-36.

գործոնների հետ<sup>2</sup>: Չճանաչված պետությունների առկայությունն ու դրանց առնչվող հակամարտությունները ազդում են ոչ միայն այդ և այլ պետությունների զարգացման, այլ նաև միջազգային (միջպետական) հարաբերությունների և միջազգային քաղաքական համակարգի վրա: Այդ պետությունների հռչակմանը շատ հաճախ հաջորդում են էթնոքաղաքական հակամարտություններ, իսկ ռազմական բախումներից հետո հակամարտությունները սառեցվում են, սակայն բազմաթիվ խնդիրներ մնում են չլուծված: Այդ պետությունների վերջնական քաղաքական կարգավիճակի հարցն էլ տարբեր դեպքերում տարբեր է լինում: Մի դեպքում միջազգայնորեն ճանաչվում է այդ պետությունների անկախությունը՝ դրանք անդամակցում են ՄԱԿ-ին (Արևելյան Թիմոր, Հարավային Սուդան, Էրիթրեա և այլն), այլ դեպքերում վերադառնում են մետրոպոլիայի կազմ, ինչպես, օրինակ Չեչնիան (Ռուսաստան), Սերբական Կրաինան (Խորվաթիա 1991-1995), Թամիլ Էլևամը (Շրի Լանկա 1986-2009) և այլն: Սակայն անկախ արդյունքից, այդ պետություններում տևական ժամանակահատված մնում են զարգացման հետ կապված բազմաթիվ դժվարություններ: Թվում է, թե միջազգային հանրությունը պետք է հատուկ ուշադրություն դարձներ այդ խնդիրներին, քանի որ այդ պետությունների բնակչությունը ոչ միայն կրում է բազմաբնույթ տառապանքներ ռազմական ագրեսիայի հետևանքով, այլև մինչ քաղաքական վերջնական կարգավիճակի որոշումը այլ պետություններ, որպես կանոն, խուսափում են հարաբերությունների հաստատումից ու զարգացումից: Մինչդեռ այդ ընթացքում կուտակված խնդիրները տասնամյակներ շարունակ նոր տառապանքներ են ավելացնում անգամ հետկոնֆլիկտային շրջանում: Վերջին տասնամյակում որոշ տեղաշարժ կա միջազգային հանրության և առանձին պետությունների գործողությունների մեջ, որն ուղղված է իրավիճակի

<sup>2</sup> **Berg E.**, Examining Power-Sharing in Persistent Conflicts: De Facto Pseudo-Statehood versus *de Jure* Quasi-Federalism, *Global Society*, 2007, **21**, 2, 199–217.

բարելավմանը, ինչը կարևորում է այդ իրավիճակի ուսումնասիրությունը:

Չճանաչված պետությունների ուսումնասիրության դեպքում հատկապես կարևոր է, թե ինչ չափանիշների հիման վրա են այդ հետազոտությունները կատարվում: Այդ չափանիշների թվին են դասվում՝

1. Չճանաչված պետության ձևավորման պատմությունը, էթնիկ հակամարտության առանձնահատկությունները և զարգացման հիմնական փուլերը:

2. Բանակցային գործընթացի առանձնահատկությունները, միջնորդությունը, խաղաղ կարգավորման ծրագրերի առկայությունը:

3. Պետականության և տնտեսական համալիրի ձևավորումը: Քաղաքական համակարգի առանձնահատկությունները, ժողովրդավարության մակարդակը:

4. Մետրոպոլիայի կազմ վերադառնալու հնարավորության առկայությունը կամ բացակայությունը:

5. Որպես պետություն գոյության հնարավորությունները:

6. Արտաքին դերակատարների՝ չճանաչված պետության կարգավիճակը փոխելու հնարավորությունն ու շահագրգռվածությունը<sup>3</sup>:

Կոլստոն դե ֆակտո պետությունները սահմանում է որպես սուբյեկտներ, որոնք ունեն հետևյալ հատկանիշները՝

1. Չճանաչված պետության ղեկավարները վերահսկողություն են սահմանել պետության տարածքի մեծ մասի վրա:

2. Միջազգային ճանաչման բացակայություն:

Այս սուբյեկտները պետք է լինեն չճանաչված առնվազն երկու տարի<sup>4</sup>:

<sup>3</sup> **Добронравин Н.**, Непризнанные государства в «серой зоне» мировой политики: основы выживания и правила суверенизации. Издательство Европейского университета в Санкт-Петербурге, 2011, 56 с.

<sup>4</sup> **Kolsto P.**, The Sustainability and Future of Unrecognized Quasi-States, *Journal of Peace and Research*, 2006, **43**, 6, 723-740.

Չնայած միջազգային ճանաչման բացակայությանը, չճանաչված պետությունների մի մասին հաջողվել է ստեղծել համեմատաբար արդյունավետ պետական կառավարման ինստիտուտներ, իսկ որոշ տեղերում նախաձեռնվել են նաև ժողովրդավարական բավական արդյունավետ վարչակարգեր: Դե ֆակտո պետությունները շատ հաճախ են բարձրաձայնում, որ արդյունավետ պետականաշինությունը կարող է ստեղծվել առանց միջազգային ճանաչման, այլ կերպ, ներքին ինքնիշխանությունը չի բացառում արտաքին ինքնիշխանության բացակայությունը: Այս փաստարկը հաճախ է շրջանառվում և դարձել է ճանաչում ձեռք բերելու ռազմավարության կենտրոնական տարրը. դե ֆակտո պետություններն ավելի հաճախ են պնդում, որ իրենք «վաստակել են» իրենց ճանաչումը և ապացուցել են, որ կենսունակ պետություններ են: Չճանաչված պետությունների երկու հիմնական նպատակներն են դե ֆակտո անկախության ձեռքբերումը և միջազգային ճանաչումը<sup>5</sup>:

### **Ինտեգրում, թե՞ համագործակցություն**

Միջազգային և ներպետական հակամարտությունները հաճախ անդառնալի հետևանքներ են ունենում, ինչին անմիջապես անդրադարձ է կատարվում միջազգային հանրության կողմից, սակայն քաղաքական խնդիրներն ու հատկապես տնտեսական վնասները հազվադեպ են քննարկման թեմա դառնում<sup>6</sup>: Որոշ շրջանակներում տնտեսական խնդիրները քննարկվում են, սակայն մեծամասամբ քաղաքական օրակարգում այդպես էլ չեն հայտնվում, չեն քննարկվում նաև պաշտոնական բանակցությունների ժամանակ: Քննարկումների շրջանակը հիմնականում վերաբերում է մարդու իրավունքների պաշտպանությանը, ժողովրդավարությանը, քաղաքական ինստիտուտների ձևավորմանը կամ փոփոխությանը,

<sup>5</sup> **Caspersen N.**, Playing the Recognition Game: External Actors and De Facto States, *The International Spectator*, 2009, **44**, 4, 47-60.

<sup>6</sup> **Kang S., Meernik J.**, Determinants of Post-Conflict Economic Assistance, *Journal of Peace Research*, 2004, **41**, 2, 149-166.

սակայն ոչ երբեք տնտեսական արդիականացմանը, ինչը վճռորոշ կարող է լինել բոլոր մյուս խնդիրների հաղթահարման տեսանկյունից:

Այս առումով դրական առաջընթաց կարող է ապահովել միջազգայնացումը, որի ներկայիս փուլը տարբերվում է բոլոր նախորդներից նախ և առաջ իր բազմազանությամբ և տարածվածությամբ: Վերջին մի քանի տասնամյակներում տարածաշրջանային ինտեգրման գործընթացներն այդ գործընթացի առանցքային տարրերն են: Եվրոպական միությունն այլևս տարածաշրջանային ինտեգրման եզակի դեպք չէ: Տարածաշրջանային գործընթացների բազմազանությունը բացատրում է այն երկիմաստությունը, որն առկա է միջազգայնացման գործընթացներին կողմ և դեմ արտահայտվողների միջև: Այս գործընթացը համատեղում է տարածաշրջանային ինտեգրման գործընթացների ազդեցությունը հին և նոր գլոբալ ինստիտուտների վրա: Ընդհանուր առմամբ, գլոբալացման ժամանակակից փուլում, որը ոչ միատարր, երկակի գործընթաց է, իրենց կարևոր ու անհերքելի նշանակությունն ունեն ամենատարբեր ինտեգրման կառույցները:

Տարածաշրջանացումը (regionalisation) ենթադրում է տարածաշրջանի պետությունների միջև ակտիվ փոխազդեցություն տարբեր ոլորտներում՝ քաղաքական, տնտեսական, ռազմական և այլն: Տարածաշրջանային ինտեգրումը աշխարհագրորեն իրար մոտ պետությունների համագործակցությունն է քաղաքական և տնտեսական բնագավառներում: Այն շատ հաճախ է քննարկվում, քանզի, ինչպես գլոբալացումը, այն նույնպես ձևավորում է ազգային քաղաքականության արտաքին ազդեցություններ, աճում է աշխատուժի և կապիտալի շարժունակությունը<sup>7</sup>: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միավորումները կարող են շատ մեծ նշանակություն ունենալ տարածաշրջանում առկա հակամարտությունների կառավարման և կանխարգելման տեսանկյունից: Տնտեսական ինտեգրման դրական ազդեցությունը հետևյալն-

<sup>7</sup> **Madeira M.**, Regional integration and national social policies, *Research and Politics*, 2014, October-December, 1–9.

Ֆիլկտային պետության սոցիալ-տնտեսական զարգացման վրա կարող է որոշիչ դեր ունենալ նաև միջազգային ճանաչման առումով:

Եվրոպայի և Արևելյան Ասիայի տարածաշրջայնացման գործընթացների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինտեգրման միավորումներ ձևավորվում են ինչպես տնտեսական զարգացածության միևնույն մակարդակն ունեցող երկրներ միջև, այնպես էլ զարգացման մակարդակի զգալի տարբերություններով երկրների միջև: Ֆինանսական, տնտեսական կամ քաղաքական ինտեգրման միավորումները, որոնց կարող են անդամակցել պետությունները, տարբերվում են միմյանցից ու ինտեգրման միավորումների «կատարյալ» ձևերից: Այդ միավորումները նույնական չեն, քանզի բոլոր քայլերն ու գործողությունները պետք է հստակ ընկալելի լինեն ինչպես կառավարությունների, այնպես էլ անդամ պետությունների բնակչության կողմից և, բնականաբար, բիսեն նրանց շահերից<sup>8</sup>:

Ընդհանուր առմամբ, տարածաշրջանային կազմակերպությունները կարող են քաղաքական սուր հակասությունների լուծման համար կանխարգելիչ դերակատարություն ունենալ<sup>9</sup>: Առավել հայտնի օրինակներից մեկը Աձխի և պողպատի եվրոպական միությունն է (ԱՊԵՄ), որը ստեղծվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ նպատակ ունենալով հարթել Գերմանիայի և Ֆրանսիայի միջև առկա հակասությունները, ինչպես նաև կանխարգելել հետագա բախումները Եվրոպայում: Նմանատիպ միջազգային կազմակերպությունների այլ օրինակներ ևս կան՝ Հարավարևելյան Ասիայի Երկրների Ասոցիացիան (ՀԱԵԱ), Անդյան համայնքը<sup>10</sup> Ասիախաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը (APEC), Հյուսիսային

<sup>8</sup> **Petit P.**, Globalisation and Regional Integration: A Comparative Analysis of Europe and East Asia, *Competition and Change*, 2006, **10**, 2, 113–140.

<sup>9</sup> **Biswaro J.**, The Role of Regional Integration in Conflict Prevention, Management, and Resolution in Africa. The Case of African Union, 2013, p. 31.

<sup>10</sup> **Swanström N.**, Regional Cooperation and Conflict Management: Lessons from the Pacific Rim (Uppsala: Department of Peace and Conflict Research), Uppsala University, 2002.



Ամերիկայի ազատ առևտրի պայմանագիրը (NAFTA) և այլն: Վերոնշյալ կազմակերպությունները կարողացել են կանխարգելել և կարգավորել տնտեսական ոլորտում առաջացած վեճերը: Ամենաերիտասարդ տնտեսական ինտեգրման միավորումներից մեկն էլ հետխորհրդային տարածքում ձևավորված Եվրասիական տնտեսական միությունն է (2014թ. մայիսի 29):

Կարելի է առանձնացնել երեք տարբեր մոտեցումներ, թե ինչու են այս կամ այն պետության քաղաքացիները աջակցում կամ դեմ արտահայտվում տարածաշրջանային ինտեգրմանը<sup>11</sup>: Առաջինը՝ ուտիլիտարիզմը (օգտապաշտությունը), ենթադրում է, որ մարդիկ կատարում են կորուստների ու օգուտների հաշվարկ այս կամ այն միավորմանն անդամակցությունը դիտարկելիս<sup>12</sup>: Երկրորդ մոտեցումը, որի հիմքում սոցիալական ուտիլիտարիզմն է, կենտրոնանում է այն օգուտների վրա, որոնք, կունենա պետությունը, մինչդեռ «եսակենտրոն» ուտիլիտարիզմը (ego-centric utilitarianism) ենթադրում է կենտրոնացում անհատական օգուտների վրա: Ուտիլիտարիզմը հաճախ կիրառվում է ինտեգրման տնտեսական ասպեկտները հաշվի առնելիս՝ պայմանավորված այն հանգամանքով, որ առևտրի ազատականացումը կարող է ունենալ տարբեր հետևանքներ: Մասնավորապես, մարդիկ, ովքեր սոցիալ-տնտեսական ավելի բարձր դասի են պատկանում, ավելի են հակված աջակցել տնտեսական ինտեգրմանը, քանզի ավելի պատրաստ են մրցակցել գլոբալ շուկաներում:

Ուսումնասիրությունների երկրորդ ուղղության ուշադրության կենտրոնում է պետության քաղաքացիների և հնարավոր ինտեգրման միավորման «ինքնության» համատեղելիությունը: Խոսքը նախ և առաջ լեզվի, էթնիկ պատկանելության, կրոնի կամ այլ մշակութային արժեքների մասին է: Նմանատիպ ընդհանրությունների

<sup>11</sup> Spina N., Threats to National Security and Public Support for Integration: the Case of Armenia and Nagorno-Karabakh, *Caucasus Survey*, 2018, 6, 3, 230-251.

<sup>12</sup> Hooghe L., Marks G., Calculation, Community and Cues: Public Opinion on European Integration, *European Union Politics*, 2005, 6, 4, 419-443; McLaren L., Identity, Interests and Attitudes to European Integration, 2005, New York, Palgrave Macmillan.

բացակայությունը կարող է հակասություններ առաջացնել, ընդհուպ նաև ձախողել ինտեգրման գործընթացը: Ավելին, ազգային ինքնության բարձր մակարդակ ունեցող քաղաքացիները հաճախ թերահավատ են վերազգային կառույցների նկատմամբ առհասարակ<sup>13</sup>:

Եվ վերջապես, հետազոտությունների երրորդ ուղղությունը կենտրոնանում է ինտեգրման անվտանգային բաղադրիչի վրա, այսինքն, թե ինչպես տարբեր պայմաններում և տարբեր ժամանակահատվածներում առաջացած խնդիրները, որոնք կապված են ազգային անվտանգության հետ, կարող են ազդել ինտեգրման «նախասիրությունների» վրա<sup>14</sup>: Հատկանշական է, որ ազգային անվտանգությանը սպառնացող վտանգների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է անվտանգային, ոչ թե տնտեսական ինտեգրմանը: Տարածքային հակամարտությունների կամ արտաքին թշնամու առկայության դեպքում քաղաքացիներն ավելի հակված են սոցիալական ուսիլիտարիզմին, որը հիմնված է անվտանգության վրա և կողմ են ինտեգրման միավորումների մաս դառնալու, եթե այդ միավորումները կբարելավեն պետության վիճակը անվտանգության բնագավառում: Ըստ այդմ, անդամակցումը վերազգային կառույցին կարող է հիմնովին փոխել պետության անվտանգությունը՝ հակառակորդի ագրեսիայի կանխման ճանապարհով: Հետևաբար, անվտանգության ոլորտում ինտեգրման աջակիցների թիվն ավելի մեծ կլինի իրական կամ հավանական ճգնաժամային իրավիճակների առկայության դեպքում, երբ պետության անվտանգությունը համարվում է «անհետաձգելի»: Նմանատիպ իրավիճակներում պակաս կարևորություն է ստանում տնտեսական ինտեգրումը: Որպես օրինակ կարելի է դիտարկել Վրաստանի դեպքը. հետազոտությունները ցույց են տալիս, որ վրացիներն ավելի կարևոր են համարում անդակամցությունը ՆԱՏՕ-ին, քան

<sup>13</sup> Hooghe L., Marks G., Calculation, Community and Cues: Public Opinion on European Integration, *European Union Politics*, 2005, 6, 4, 419–443.

<sup>14</sup> Spina N., նշվ. աշխ. .:

ԵՄ-ին՝ պայմանավորված Հարավային Օսիայի և Աբխազիայի խնդիրներով<sup>15</sup>:

Վերոնշյալ բոլոր խնդիրները, թերևս, ավելի ակնառու են դառնում չճանաչված պետություններում (Լեռնային Ղարաբաղ, Կոսովո, Աբխազիա, Մերձդնեստր, Հարավային Օսիա և այլն), որտեղ տնտեսական զարգացումն ու կայունությունն ապահովելն ուղեկցվում է մի շարք խնդիրներով, ինչպիսիք են՝ ֆինանսական, ռազմական բարդ իրավիճակ, փախստականների և ներքին տեղահանված անձանց հետևողական ֆիլիկտային խնդիրներ, որոշ դեպքերում՝ քաղաքական համակարգի անկայունություն, և այլն: Ինչպես Ֆերերո-Վալդներն է նշում, Հարավային Կովկասի չճանաչված պետություններում ժողովրդավարության և տարածաշրջանային համագործակցությանը խթանմանը զուգահեռ անհրաժեշտ է բարելավել տարածաշրջանի սոցիալ-տնտեսական հեռանկարները, ինչն իր հերթին կարող է նպաստել դրական-համագործակցային մթնոլորտի ստեղծմանն ու հակամարտությունների կարգավորման իրատեսական հեռանկարների ստեղծել<sup>16</sup>:

### Ինտեգրման Կոսովոյի փորձը

Չճանաչված պետությունների և ինտեգրման միավորումների համագործակցության կամ հնարավոր ինտեգրման գործընթացների մասին խոսելիս նախ և առաջ պետք է անդրադառնալ Կոսովոյի դեպքին, որտեղ իր ուրույն դերակատարությունն ունի ԵՄ-ն: Ընդհանուր առմամբ Եվրոպական միության և Եվրոպական ինտեգրման գործընթացների դերը հակամարտությունների կարգավորման գործընթացում անժխտելի է: Ի սկզբանե ԵՄ-ն ստեղծվել է որպես «խաղաղության» նախագիծ 20-րդ դարի կեսին: Այն առանցքային նշանակություն ունեցավ Եվրոպայում խաղաղության

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> **Ferrero-Waldner B.**, The European Neighbourhood Policy: The EU's Newest Foreign Policy Instrument, *European Foreign Affairs Review*, 2006, **11**, 2, 139-142.

ապահովման, կայունացման ու զարգացման առումով: Որպես զլոբալ դերակատար՝ ԵՄ-ն խթանում է ինտեգրման գործընթացները խաղաղության ապահովման, զարգացման, ինչպես նաև ամբողջ աշխարհում հակամարտությունների հաղթահարման նպատակով: Հակամարտությունների կանխարգելման, կարգավորման, արժեքների պաշտպանության ու բարեկեցության և միջազգային խաղաղության ապահովման, դրույթներն ամրագրված են 2009թ. դեկտեմբերի 1-ին ուժի մեջ մտած Լիսաբոնյան համաձայնագրով<sup>17</sup>: ԵՄ-ն ակտիվ դերակատարություն և ներգրավվածություն ունի մի շարք հակամարտությունների կարգավորման գործընթացներում՝ Կոսովո, Կիպրոս, քրդական խնդիր, իսրայելապաղեստինյան հակամարտություն, Սերբիա և Մոնտենեգրո:

Արևմտյան Բալկանները բավական բարդ տարածաշրջան են ԵՄ-ի համար: Վերջին երկու տասնամյակներում՝ Հարավսլավիայի փլուզումից հետո, ԵՄ-ն ակտիվ ներգրավվածություն է ունեցել տարածաշրջանում առկա հակամարտությունների կարգավորման ու կառավարման գործընթացում<sup>18</sup>: Չնայած Սերբիայի և Կոսովոյի միջև վերջնական կարգավիճակի և վճռական կարգավորման վերաբերյալ համաձայնության բացակայությանը, ԵՄ-ն Կոսովոյում 2008թ. սկսած դարձավ գլխավոր դերակատար՝ փորձելով հակամարտությունը կարգավորել այլընտրանքային միջոցներով և աստիճանական քայլերով: ԵՄ-ի երկարաժամկետ ռազմավարությունը ներառում էր պետականաշինության ծրագիր, որն, ըստ էության, ժառանգություն էր ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմից՝ օրենքի գերակայություն, մարդու իրավունքների պաշտպանություն, ակտիվ ֆինանսական և տնտեսական աջակցություն ապակենտրոնացման գործընթացում և Կոսովոյի քաղաքականության ընդլայնման միջոցով<sup>19</sup>:

<sup>17</sup> The Treaty of Lisbon, <http://www.europarl.europa.eu/factsheets/en/sheet/5/the-treaty-of-lisbon>, (29.01.2019)

<sup>18</sup> **Yabanci B.**, Reframing Legitimacy Problematique: EU Conflict Resolution in Kosovo and North Cyprus, University of Bath, 2012, p. 14.

<sup>19</sup> Նույն տեղում:

1999թ. սկսած ԵՄ-ն դարձավ առանցքային դերակատար Կոսովոյի հակամարտության կարգավորման գործընթացում՝ նաև աջակցություն ցուցաբերելով ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմին (UNMIK): ԵՄ-ն պատասխանատու էր հետևողական փուլում տնտեսական աջակցության ու վերազինման համար, իսկ ֆինանսավորումն իրականացնում էր Եվրոպական հանձնաժողովը:

ԵՄ-Կոսովո ակտիվ համագործակցության մեկնարկը կարելի է համարել Եվրոպական միության խորհրդի կողմից հաստատված «Կոսովոյում Եվրոպական Միության օրենքի գերակայության առաքելության» (European Union Rule of Law Mission in Kosovo "EULEX Kosovo") ծրագրի իրականացումը 2008թ. փետրվարի 4-ի որոշման հիման վրա: Առաքելության ձևավորման և ներգրավման իրավական հիմը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1244 բանաձևն էր<sup>20</sup>: Բանաձևը նախատեսում էր միջազգային քաղաքացիական և անվտանգության մարմինների ներկայության ապահովում 12 ամիս նախնական ժամկետով (կետ 12), սահմանում էր միջազգային քաղաքացիական ներկայության հիմնական լիազորություններն ու պարտականությունները, ինչպես նաև քաղաքացիական կարգուկանոնի պահպանման նպատակով տեղակայվող Միջազգային ոստիկանական անձնակազմի լիազորությունները<sup>21</sup> (կետ 10, 11, 17): EULEX-ը Կոսովոյում գործունեություն ծավալելու մանդատ ունի մինչև 2020թ. հունիսի 20-ը: Այն հանդիսանում է ԵՄ Ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականության շրջանակներում իրականացվող ամենամեծ և ամենաձախսատար առաքելությունը, բացի այդ այն միակն է, որ ունի գործադիր-կիրառական մանդատ<sup>22</sup>: EULEX-ն իր գործունեությունը իրականացնում է «Եվրոպական

<sup>20</sup> Security Council Resolution 1244 (1999) on the situation relating Kosovo, <https://peacemaker.un.org/kosovo-resolution1244>, (05.12.2019)

<sup>21</sup> Council Joint Action 2008/124/CFSP of 4 February 2008 on the European Union Rule of Law Mission in Kosovo, EULEX, [https://www.eulex-kosovo.eu/eul/repository/docs/WEJointActionEULEX\\_EN.pdf](https://www.eulex-kosovo.eu/eul/repository/docs/WEJointActionEULEX_EN.pdf), (05.12.2019)

<sup>22</sup> **Osland K., Peter M.**, The double proximity paradox in peacebuilding: implementation and perception of the EU rule of law mission in Kosovo, *European Security*, 2019, **28**, 4, 493-512.

անվտանգային և պաշտպանական քաղաքականության» (European Security and Defence Policy) շրջանակներում և աջակցություն է ցուցաբերում Կոսովոյի իշխանություններին, դատական և իրավապահ մարմիններին կայունացման ու հաշվետվողականության ապահովման գործընթացում: Առաքելության խնդիրներն են՝ արդարադատության բազմաէթնիկ համակարգի զարգացում և ամրապնդում, այդ թվում՝ բազմաէթնիկ ոստիկանական և մաքսային համակարգերի կայուն գործունեության համապատասխանեցում միջազգային ընդունված չափանիշներին և եվրոպական փորձին<sup>23</sup>:

2008թ. փետրվարի 17-ին Կոսովոյի անկախության միակողմանի հռչակումից հետո Եվրոպական հանձնաժողովը փետրվարի 18-ին հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ, մասնավորապես, նշվում էր, որ Կոսովոյի անկախության հռչակումը ընդգծում է Հանձնաժողովի համոզմունքն առ այն, որ Կոսովոն առանձնահատուկ դեպք է<sup>24</sup> (*sui generis case*), ինչը ևս մեկ անգամ վերահաստատում է Կոսովոյի նկատմամբ ԵՄ-ի առանձնահատուկ վերաբերմունքը: Թեև հարկ է նշել, որ այդ որոշումը քաղաքական հիմք ուներ, քանի որ ոչ ԵՄ-ն, ոչ որևէ այլ կազմակերպություն կամ անհատ մինչ այժմ այդ առանձնահատկությունը հիմնավորող որևէ ողջամիտ փաստարկ չի ներկայացրել:

2009թ. Կոսովոյում գրանցված զարգացումների վերաբերյալ ԵՄ-ի կողմից ընդունված զեկույցում նշվում էր, որ Կոսովոն պետք է առաջընթաց գրանցի օրենքի գերակայության, դատական համակարգի գործունեության բարելավման բնագավառում, ինչպես նաև կոռուպցիայի, փողերի լվացման, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտներում: Ընդ որում, առանձնահատուկ ուշադրության էր արժանացել պետական կառավարման համա-

<sup>23</sup> Kosovo: Council establishes an EU Rule of Law Mission, appoints an EU Special Representative, [https://www.consilium.europa.eu/ueDocs/cms\\_Data/docs/pressData/en/gena/98768.pdf](https://www.consilium.europa.eu/ueDocs/cms_Data/docs/pressData/en/gena/98768.pdf), (05.12.2019)

<sup>24</sup> European Commission-Kosovo, [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/countries/detailed-country-information/kosovo\\_en](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/countries/detailed-country-information/kosovo_en), (05.12.2019)

կարգում առկա խնդիրների արձանագրումն ու մատնանշվել էին փոփոխությունների հիմնական ուղենիշները<sup>25</sup>:

2011թ. մեկնարկեց Կոսովո-Սերբիա երկխոսությունը, ինչը կարելի է դիտարկել որպես ԵՄ-ի ակտիվ գործունեության անմիջական հետևանք: Մինչև 2013թ. ընթացող հանդիպումներին հաջորդեց Բրյուսելյան համաձայնագրի ստորագրումը<sup>26</sup>, որը, փաստացի, Սերբիայի և Կոսովոյի միջև երկխոսության հաստատման առաջին ամրագրումն էր: Համաձայնագրի ստորագրումն ու ձեռք բերված պայմանավորվածությունների ամրագրումը հնարավորություն սովեցին ԵՄ-Կոսովո հարաբերությունները տեղափոխել որակապես նոր մակարդակ:

ԵՄ-ի և Կոսովոյի միջև «Կայունացման և ասոցացման համաձայնագրի» վերաբերյալ բանակցությունները մեկնարկեցին 2013թ.: 2015թ. հոկտեմբերի 27-ին համաձայնագիրը կնքվեց և ուժի մեջ մտավ 2016թ. ապրիլի 1-ին: Այդ ծավալուն փաստաթուղթը<sup>27</sup> բաղկացած է 10 հիմնական մասերից՝

1. **Հիմնական դրույթներ:** Կոսովոն պարտավորվում է հարգել ժողովրդավարական սկզբունքներն ու մարդու իրավունքները, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները, օրենքի գերակայությունն ու շուկայական տնտեսություն կառուցելու սկզբունքները, շարունակել կառուցողական երկխոսությունը Սերբիայի հետ, ինչպես նաև շարունակել խթանել համագործակցությունն ու բարիդրացիական հարաբերությունները տարածաշրջանում:

<sup>25</sup> Kosovo under UNSCR 1244/99 2009 Progress Report, [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/pdf/key\\_documents/2009/ks\\_rapport\\_2009\\_en.pdf](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/pdf/key_documents/2009/ks_rapport_2009_en.pdf), (06.12.2019)

<sup>26</sup> JOINT REPORT TO THE EUROPEAN PARLIAMENT AND THE COUNCIL, [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/pdf/key\\_documents/2013/ks\\_spring\\_report\\_2013\\_en.pdf](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/pdf/key_documents/2013/ks_spring_report_2013_en.pdf), (06.12.2019)

<sup>27</sup> Stabilisation and Association Agreement, [https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:22016A0316\(01\)](https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:22016A0316(01)), (06.12.2019)

2. **Քաղաքական երկխոսություն**, ինչը նախ և առաջ ենթադրում է Մերբիայի և Կոսովոյի միջև հարաբերությունների կարգավորման գործընթաց, Կոսովոյի՝ եվրոպական հեռանկարի առաջխաղացում և ԵՄ-ի հետ աստիճանական մերձեցում:

3. **Տարածաշրջանային համագործակցություն**: Կոսովոն պարտավորվում է միանալ Կենտրոնական Եվրոպայի ազատ առևտրի համաձայնագրին և հետևողական ջանքեր ուղղել այս ոլորտում առաջընթաց գրանցելու ուղղությամբ:

4. **Ապրանքների ազատ տեղաշարժ**՝ այդ թվում երկկողմ ազատ առևտրի գոտիների ստեղծում առավելագույնը 10 տարի ժամանակահատվածով, ինչպես նաև մաքսային սակագների իջեցման կամ առհասարակ չեղարկման երաշխավորված գործընթաց:

5. **Աշխատուժի և կապիտալի տեղաշարժ, ծառայությունների մատուցում**: Պայմանագրի երկու կողմերն էլ պետք է ձեռնարկեին այնպիսի քայլեր, որոնք աստիճանաբար թույլ կտային ընկերություններին կամ քաղաքացիներին ծառայություններ մատուցել մյուս կողմի տարածքում:

6. **Ազգային օրենսդրության համապատասխանեցում ԵՄ օրենսդրությանը**:

7. **Ազատություն, անվտանգություն և արդարադատություն**: Առաջնային կարևորություն էր ստանում օրենքի գերակայության ապահովումը, դատական համակարգի անկախությունը, անկողմնակալությունն ու գործունեության արդյունավետության բարձրացումը:

8. **Համագործակցության քաղաքականություն**: ԵՄ-Կոսովո սերտ համագործակցության հաստատում:

9. **Ֆինանսական համագործակցություն** վարկերի (այդ թվում Եվրոպական ներդրումային բանկ) և դրամաշնորհների տեսքով: Ընդ որում, ֆինանսական աջակցության նպատակը Կոպենհագենյան չափանիշների հարցում առաջընթաց գրանցելն է:

10. **Վերահսկողություն**: Կայունացման և ասոցացման համաձայնագիրը նախատեսում է Կայունացման և ասոցացման խորհրդի



ստեղծում, որը վերահսկելու էր համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարման գործընթացը:

Կոսովոյի՝ ԵՄ օրակարգի իրագործման հարցում մեծ դերակատարություն ունի նաև Կոսովոյում ԵՄ գրասենյակը<sup>28</sup>, որի առաքելությունն է ներկայացնել, բացատրել և իրականացնել ԵՄ քաղաքականությունը, վերլուծել քաղաքական զարգացումները Կոսովոյում: Հատկանշական է, որ գրասենյակն առանցքային դերակատարություն ունի ֆինանսական աջակցության տրամադրման գործում, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և այդ ոլորտում ԵՄ ջանքերի ամրապնդման գործընթացում: Ինչ վերաբերում է ֆինանսական աջակցությանը, ապա ընդհանուր առմամբ ԵՄ-ն ցուցաբերել է 2,3 միլիարդ եվրոյի աջակցություն՝ 1999թ. սկսած<sup>29</sup>: Ավելին, 2007թ. հիմնադրված աջակցության մեխանիզմի միջոցով, որը կոչվում է Աջակցություն մինչև անդամակցություն (Instrument for Pre-Accession Assistance), նախատեսվում էր 2014-2020թթ. ընթացքում Կոսովոյին տրամադրել 602 միլիոն եվրոյի աջակցություն<sup>30</sup>, որն օգտագործվելու էր հետևյալ ոլորտներում՝ ժողովրդավարություն և կառավարում, օրենքի գերակայություն և հիմնարար ազատություններ, էներգետիկ ոլորտ, կրթություն, գյուղատնտեսություն և գյուղական համայնքների զարգացում, տարածաշրջանային համագործակցություն և այլն:

ԵՄ-ի Արտաքին և անվտանգության միասնական քաղաքականության ձևավորումից հետո Արևմտյան Բալկանները կարևոր տեղ են զբաղեցրել ԵՄ արտաքին քաղաքականության օրակարգում: Ավելին, Արևմտյան Բալկանները հայտարարվեցին որպես

<sup>28</sup> EU Office in Kosovo /EUSR, [https://eeas.europa.eu/delegations/kosovo/1386/about-eu-office-kosovo-eusr\\_en](https://eeas.europa.eu/delegations/kosovo/1386/about-eu-office-kosovo-eusr_en), (06.12.2019)

<sup>29</sup> European Union Office in Kosovo, European Union Special Representative in Kosovo, [https://eeas.europa.eu/delegations/kosovo/1387/kosovo-and-eu\\_en](https://eeas.europa.eu/delegations/kosovo/1387/kosovo-and-eu_en), (06.12.2019)

<sup>30</sup> Kosovo - financial assistance under IPA II, [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/instruments/funding-by-country/kosovo\\_en](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/instruments/funding-by-country/kosovo_en), (06.12.2019)

առաջնահերթ ուղղությունն ԵՄ-ում 2018թ. Բուլղարիայի նախագահության շրջանում: Ավելին, 2018թ. Եվրոպական հանձնաժողովն ընդունեց տարածաշրջանում իրականացվող քաղաքականության նոր ռազմավարություն՝ «Արևմտյան Բալկաններում հուսալի ընդլայնման հեռանկարների և ԵՄ ներգրավվածության ամրապնդման մասին»<sup>31</sup>: Կոսովոն նշանակալի դերակատարություն է ունեցել նաև ԵՄ Ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականության (ԸԱԱՔ) համատեքստում, քանզի այն նաև «կատալիզատորի» դեր խաղաց ԸԱԱՔ-ի ձևավորման գործում<sup>32</sup>:

ԵՄ-Կոսովո հարաբերությունների զարգացման հաջորդ կարևոր մեկնակետը վիզայի ազատականացման գործընթացի մեկնարկն էր, որը նախաձեռնել էր Եվրոպական հանձնաժողովը 2012թ. հունվարին: Այնուամենայնիվ, վիզայի ազատականացման շուրջ բանակցությունները դեռևս շարունակվում են, իսկ գործընթացի վրա ազդող գործոնները գտնվում են չափազանց լայն միջակայքում՝ անվտանգային նպատակահարմարությունից մինչև Կոսովոյի կողմից ստանձնած պարտավորությունների ոչ լիարժեք իրականացում:

ԵՄ-ի կողմից (ԵՄ անդամ բոլոր պետությունների կողմից) Կոսովոյի անկախության ճանաչման հարցը չի կարող հետաձգվել, եթե ԵՄ-ն ցանկանում է Կոսովոյի զարգացման գործում առաջընթաց ունենալ: 2018թ. ընդունված զեկույցում<sup>33</sup> Եվրոպական կառույցները մատնանշվում են բոլոր այն ոլորտները, որտեղ Կոսովոն կարողացել է առաջընթաց գրանցել և այն ոլորտները, որոնք դեռ խնդրահարույց են համարվում: Հանրային կառավարման, արդարադատության համակարգում, կոռուպցիայի, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, մարդու իրավունքների,

<sup>31</sup>Mutluer D., Tsarouhas D., EU foreign policy and ‘perceived coherence: the case of Kosovo, Southeast European and Black Sea Studies, 2018, **18**, 3, 419-438.

<sup>32</sup> **Shepherd A.**, A milestone in the history of the EU: Kosovo and the EU’s international role. *International Affairs*, 2009, **85**, 3, 513-530; **Tzifakis N.**, The European Union in Kosovo, *Problems of Post-Communism*, 2013, **60**, 1, 43-54.

<sup>33</sup> Kosovo 2018 Report, <https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/20180417-kosovo-report.pdf>, (06.12.2019)

խոսքի ազատության ոլորտներում թեև կա առաջընթաց՝ ի տարբերություն անկախության հռչակմանը հաջորդած շրջանի, սակայն դրանք նշանակալի չեն ու ոչ բավարար ինտեգրման հաջորդ փուլին անցնելու առումով: Չնայած այն հանգամանքին, որ շուկայական տնտեսության զարգացման գործում բավական առաջընթաց է գրանցվել: Համաշխարհային բանկի տվյալներով<sup>34</sup> Կոսովոյում մեկ շնչին ընկնող Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմում է 4312 դոլար, ինչն աճել է մոտավորապես 3,9 անգամ 2011թ. համեմատությամբ: Այնուամենայնիվ, սովերային տնտեսության, գործազրկության մակարդակի հետ կապված խնդիրները շարունակում են օրհասական համարվել: 2018թ. տվյալներով գործազրկությունը կազմում էր 29,57%<sup>35</sup>:

ԵՄ-Կոսովո հարաբերությունները մերձեցման վրա կարևորագույն ազդեցություն կարող են ունենալ, սակայն չի կարող այդ գործընթացի հաջողությունը ապահովող միակ ու որոշիչ գործոնը լինել: Այս պարագայում առանցքային նշանակություն ունի քաղաքական կամքի դրսևորումն ու առկա խնդիրների գիտակցումը: Առևտրաշրջանառության առկա դինամիկայի, արտահանման ծավալի կրճատման վրա ուղիղ ազդեցություն ունի Կոսովոյի և ԵՄ անդամ երկրների միջև հեռավորությունը, առևտրային ծախսերը: Հատկանշական է, որ արտահանման ծավալների առկա ծավալների պահպանման գործում մեծ դեր ունի Կոսովոյի սփյուռքը, որը ստանձնել է Կոսովոյում արտադրված ապրանքների հանրայնացման գործը ԵՄ անդամ պետություններում<sup>36</sup>:

Այս գործընթացին զուգահեռ քննարկվում է նաև Սերբիայի՝ ԵՄ անդամակցության հարցը: Կոսովոյի անկախության և Սերբիայի՝ ԵՄ անդամակցության խնդիրները գերակշռող դիրք ունեն Սերբիայի և ներքին, և արտաքին քաղաքականության

<sup>34</sup> The World Bank in Kosovo, <https://www.worldbank.org/en/country/kosovo/overview>, (06.12.2019)

<sup>35</sup> Kososvo Labour Force Survey 2018, <https://kosovodata.com/labour-force-survey-q3-2018/>, (05.12.2019)

<sup>36</sup> **Gashi P., Hisarciklilar M., Pugh G.**, Kosovo-EU trade relations: a dynamic panel poisson approach, *Applied Economics*, 2016, **49**, 27, 2642-2654.

բնագավառում 2000թ. Սլոբադան Միլոշևիչի՝ քաղաքականությունից հեռանալուց հետո: Չնայած պայմանական առումով Կոսովոյի անկախության ճանաչումը երբեք նախապայման չի հանդիսացել Սերբիայի անդամակցության համար, այնուամենայնիվ, Սերբիայի՝ Կոսովոյի անկախությունը չճանաչելը մեծ վնաս է հասցրել անդամակցության գործընթացին: Սերբիայի անդամակցության հայտը հաստատվել է 2011թ. դեկտեմբերի 9-ին, սակայն նախնական փուլում հետաձգվել է մինչև 2012թ. մարտ ամիս<sup>37</sup>: Եվ չնայած այն հանգամանքին, որ ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաները բավական հաճախ փաստում էին, որ Սերբիան առաջընթաց է գրանցել Կոպենհագենյան չափանիշների առումով, այնուամենայնիվ առաջնային պլան էր մղվում Պրիշտինայի հետ երկխոսության հաստատման խնդիրը: Այս փուլում նախանշվում է Սերբիայի ինտեգրումը միայն 2025թ.:

Չնայած այն հանգամանքին, որ Կոսովոյի անկախությունը ճանաչվել է ԵՄ անդամ երկրների մեծ մասի կողմից, այնուամենայնիվ, 5 պետություններ (Իսպանիա, Սլովակիա, Հունաստան, Ռումինիա և Կիպրոս) հրաժարվում են ընդունել անկախության միակողմանի հռչակումը: Ըստ այդմ, Կոսովոյի «եվրոպական ինտեգրման հեռանկարը» դեռևս շարունակում է աղոտ մնալ վիճարկվող կարգավիճակի պատճառով: Կարգավիճակի շուրջ առկա վեճերն ավելի են բարդացնում ԵՄ-Կոսովո հարաբերությունները, այնուամենայնիվ ակտիվ երկխոսությունը շարունակվում է: Ավելին, Կոսովոն դեռ բավական հեռու է ԵՄ ինտեգրման գործընթացի նախապայման հանդիսացող Կոպենհագենյան չափանիշները բավարարելուց: Ուստի ԵՄ-ն իր ջանքերը մեծապես ուղղում է պետականաշինության գործում աջակցություն տրամադրելուն: Հատկանշական է, որ Կոսովոյի հետ ավելի սերտ հարաբերությունների հաստատման համար ԵՄ-ի միասնական դիրքորոշման բացակայությունը չի կարող որպես վերջնագիր ներկայացվել: Նույնիսկ կարճաժամկետ հեռանկարում կարգավի-

<sup>37</sup> European Commission, Key Findings of the 2019 Report on Serbia, [https://europa.eu/rapid/press-release\\_COUNTRY-19-2780\\_en.htm](https://europa.eu/rapid/press-release_COUNTRY-19-2780_en.htm), (25.03.2019)

ճակի խնդիրը (ինչպես ՄԱԿ-ի անդամ չհանդիսանալը, այնպես էլ ԵՄ որոշ պետությունների կողմից Կոսովոյի անկախության չճանաչման փաստը) չի կարող մի շարք ոլորտներում ինտեգրման համար իրական խոչընդոտ հանդիսանալ: Այնուամենայնիվ, երբ Կոսովոն ամբողջապես պատրաստ լինի ԵՄ անդամակցությանը, կարգավիճակը կդառնա որոշիչ և իր ուրույն ազդեցությունը կունենա Կոսովոյի՝ «Եվրոպական հեռանկարի» վրա<sup>38</sup>:

### **Ինտեգրման գործընթացների հնարավորությունները Հարավային Կովկասի չճանաչված պետություններում**

Հարավային Կովկասի երեք հակամարտային գոտիների խնդիրը ևս գտնվում է ԵՄ-ի ուշադրության կենտրոնում, քանզի դրանք ազդում են ոչ միայն տարածաշրջանի անվտանգության վրա, այլ նաև Եվրոպայի և ողջ միջազգային հանրության: Այս է պատճառը, որ ԵՄ-ն շահագրգռված է ոչ միայն այս հակամարտությունների կարգավորմամբ, այլ նաև տնտեսական կայունության ապահովմամբ: Բացի այդ, այս տարածաշրջանում նոր զինված գործողությունների մեկնարկը կարող է խաթարել ԵՄ-ի էներգետիկ հետաքրքրություններն ու գործող ծրագրերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս տարածաշրջանը նաև դեպի Եվրոպա էներգակիրների տեղափոխման ռազմավարական նշանակություն ունեցող տարանցիկ գոտի է<sup>39</sup>: Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտությունների կարգավորման գործընթացում ԵՄ-ն համագործակցում է կարգավորման գործընթացում անմիջական ներգրավվածություն ունեցող կազմակերպությունների հետ, ինչպես նաև հանդես է գալիս սեփական նախաձեռնություններով, ինչպես, օրինակ, 2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո: ԵՄ-ն Հարավային Կովկասը (Հայաստան,

<sup>38</sup> **Ker-Lindsay J., Economides S.**, Standards before Status before Accession: Kosovo's EU Perspective, *Journal of Balkan and Near Eastern Studies*, 2012, **14**, 1, 77-92.

<sup>39</sup> **German T.**, Visibly Invisible: EU Engagement in Conflict Resolution in the South Caucasus, *European Security*, 2007, **16**, 3-4, 357-374.

Վրաստան, Ադրբեջան) ընդգրկեց Արևելյան գործընկերության ծրագրում տնտեսական ու քաղաքական բարեփոխումներ մեկնարկելու և տարածաշրջանում ապակայունացնող գործոնների չեզոքացման նպատակով, սակայն ակնհայտ է, որ ջանքերը դեռևս խիստ սահմանափակ են:

Լեռնային Ղարաբաղի ինտեգրման հեռանկարներն ուղիղ կապ ունեն Հայաստանի Հանրապետության ինտեգրման գործընթացների հետ: Այս առումով պետք է դիտարկել այդ հնարավորություններն արդեն իրականացված ինտեգրման գործընթացների համատեքստում, քննարկել ԵՄ-ԵԱՏՄ այլընտ-րանքը: Դեռևս 2010թ. մեկնարկեց թերևս ամենահավակնոտ գործընթացը ԵՄ-ի հետ Հայաստանի համագործակցության տեսանկյունից՝ Ասոցացման համաձայնագրի և խորը ու համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ բանակցությունները: Մինչ այդ՝ 1996թ. ապրիլին ստորագրվել, իսկ 1999թ. հուլիսին ուժի մեջ էր մտել Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը: 2009թ. մայիսին Պրահայի գագաթա-ժողովում ձեռք բերված պայմանավորվածությունների հիմա վրա մեկնարկեց Արևելյան գործընկերության ծրագիրը: Հայաստան-ԵՄ հարաբերությունները «փակուղի» մտան 2013թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ ԵԱՏՄ-ին անդամակցելու մասին հայտարարությունից հետո, ինչին հաջորդեց ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաների և ԵՄ անդամ-պետությունների ղեկավարների հայտարարություններն առ այն, որ Հայաստանի անդամակցումը ԵԱՏՄ-ին չի կարող խոչընդոտել ԵՄ-ի հետ ակտիվ համագործակցությանը: Որպես այս գործընթացի շարունակություն կարելի է դիտարկել արդեն 2017թ. նոյեմբերի 24-ին Բրյուսելում ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը: Հատկանշական է, որ այս փաստաթղթում անդրադարձ կա նաև Արցախին, որտեղ, մասնավորապես նշվում է, որ ԵՄ-ն ճանաչում է արցախյան հակամարտության խաղաղ, բանակցու-թյունների միջոցով կարգավորմանն ուղղված ՀՀ հանձնառության բացառիկ կարևորությունն ու նշանակությունը, անդրադարձ է կատարվում

նաև Լեոնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքին: Նշվում է նաև, որ հակամարտության կարգավորման գործընթացը պետք է շարունակել ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջնորդությամբ ընթացող բանակցությունների շրջանակներում, կարևոր-վում է կարգավորմանը հնարավորինս շուտ հասնելու անհրաժեշտությունը: Ճիշտ է, Արցախի հետ ավելի սերտ հարաբերություններ հաստատելու կամ կառուցողական համագործակցության անհրաժեշտությունը չի ամրագրվում վերոնշյալ և ոչ մի փաստաթղթով:

Եվրասիական տնտեսական միությանն ինտեգրման տեսանկյունից թերևս ամենաբարդ խնդիրներից մեկը ԵԱՏՄ անդամ-պետությունների ղեկավարների ոչ միանշանակ վերաբերմունքն է հենց արցախյան հակամարտությանն ու վերջնական կարգավիճակի խնդրին: Միանգամայն հասկանալի է, որ յուրաքանչյուր անդամ-պետությունն առաջնորդվում է իր շահերով, սակայն անտրամաբանական է, երբ միջազգային կազմակերպության շրջանակներում (ԵԱՏՄ) կոլեկտիվ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկման ժամանակ անդամ որոշ պետություններ փորձում են առաջ մղել ոչ անդամ պետությունների հետ երկկողմ հարաբերություններից բխող խնդիրներ, որոնք չեն մերժվում այլ անդամ պետությունների կողմից: Մասնավորապես, Ղազախստանի և Բելառուսի նախագահների ակնհայտ բացասական վերաբերմունքը, ՀԱՊԿ-ում նախագահության խնդիրը՝ կապված Յուրի Խաչատուրովի ձերբակալման հետ, և այլն<sup>40</sup>:

Այնուամենայնիվ, հողվածում դիտարկվող խնդրի տեսակետից հատկանշական է Լեոնային Ղարաբաղի սահմանի՝ ԵԱՏՄ արտաքին սահման չհամարվելն, ինչն ամրագրված է ԵԱՏՄ Հայաստանի անդամակցության պայմանագրի նախագծում: Դրա բացակայության դեպքում մաքսակետեր պետք է ստեղծվեին Քաշաթաղում, Լաչինում, ինչպես նաև Արցախ տանող մյուս ճանապարհներին: Սա մեծապես կբարդացեր Հայաստան-Արցախ ապրանքաշրջանառությունը՝ նկատի ունենալով, որ այն Արցախն

<sup>40</sup> **Баласаниян Г.**, Армения и евразийская интеграция: уроки, проблемы и перспективы, *Сборник материалов РИСИ*, 2017, сс. 7-16.

արտաքին աշխարհին կապող միակ ուղին է, այլն էլ, օդային ճանապարհով ապրանքաշրջանառության բացակայության պայմաններում:

2008թ. Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումից ի վեր Ռուսաստանն այդ պետություններին տրամադրում է ոչ միայն դիվանագիտական, քաղաքական աջակցություն, այլ նաև տնտեսական: Տնտեսական և այլ աջակցությունը ֆորմալ դարձնելու նպատակով այս ընթացքում ստորագրվել են մի շարք կարևոր փաստաթղթեր: 2008թ. սեպտեմբեր 17-ին՝ անկախության ճանաչումից անմիջապես հետո Ռուսաստանի և Աբխազիայի ու Հարավային Օսիայի միջև ստորագրվեցին «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագրերը<sup>41</sup>: Փաստաթղթերում, մասնավորապես, նշվում էր մի քանի առանցքային ոլորտներում ակտիվ համագործակցության մասին, այդ թվում՝ արտաքին քաղաքականություն, ինքնիշխանության ապահովում, պաշտպանություն, խաղաղության ու կայունության ապահովում, տարածքային ամբողջականություն և այլն: Ընդ որում, համաձայնագրի 9-րդ հոդվածը սահմանում է, որ կողմերը չեն անդամակցի միությունների կամ դաշինքների, որոնք կարող են վնասել մյուս կողմին:

2015թ. մարտի 18-ին Ռուսաստանի և Հարավային Օսիայի միջև կնքվեց «Համագործակցության և ինտեգրման համաձայնագիրը»<sup>42</sup>, որը տնտեսական ինտեգրման հաջորդ կարևոր քայլն էր: Պայմանագիրը ենթադրում էր հարաբերությունների տեղափոխում նոր՝ միջպետական մակարդակ, ինչպես նաև դաշնակցային և ռազմավարական համագործակցություն: Ընդ որում, նշվում էր, որ

<sup>41</sup> Договор о дружбе, сотрудничестве и взаимной помощи между Российской Федерацией и Республикой Южная Осетия, <http://kremlin.ru/supplement/199>, (20.11.2019); Договор о дружбе, сотрудничестве и взаимной помощи между Российской Федерацией и Республикой Абхазия, <http://kremlin.ru/supplement/200>, (20.11.2019)

<sup>42</sup> Договор между Республикой Южная Осетия и Российской Федерацией о союзнничестве и интеграции, <https://presidentruo.org/dogovor-mezhdu-respublikoj-yuzhnaya-osetiya-i-rossijskoj-federacij/>, (20.11.2019).



միջպետական հարաբերությունները որակական առումով նոր փուլ տեղափոխելը համապատասխանում է երկու երկրների ազգային շահերին: Ուշագրավ է, որ համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն ՌԴ-ն Հարավային Օսիային ներդրումային ծրագրերի միջոցով աջակցելու է սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով:

Ընդհանուր առմամբ, ինչպես հարցումներն են ցույց տալիս, Հարավային Օսիայի բնակիչների մեծամասնությունն ապրում է ծանր պայմաններում, որի պատճառը տնտեսական վերափոխումներն են, որոնք ռազմական գործողությունների անմիջական հետևանքն են<sup>43</sup>: Սոցիալ-տնտեսական խնդիրների հետևանքով բնակչության առնվազն 24%-ը ցանկանում է արտագաղթել երկրից, ընդ որում նման ցանկություն հայտնողների մեծ մասը որպես արտագաղթի հիմնական ուղղություն նշում է Ռուսաստանը<sup>44</sup>:

Արխագիայում իրավիճակը մասամբ տարբերվում է Հարավային Օսիայից, որին ԵՄ-ն բացի բանակցային գործընթացում աջակցություն ցուցաբերելը, նաև ֆինանսական աջակցություն է ցուցաբերում հետկոնֆլիկտային փուլի խնդիրների կարգավորման նպատակով: Ընդ որում, այս ամենն այն պարագայում, որ Արխագիան վարում է խիստ ռուսամետ քաղաքականություն: ԵՄ-ն Արխագիայում իրականացնում է նաև մի շարք ծրագրեր, որոնց նպատակը սննդի անվտանգության ապահովումն է, առողջապահական բարեփոխումներն ու նոր աշխատատեղերի ստեղծումը:

2008թ. ռուս-վրացական պատերազմի ավարտից և Ռուսաստանի կողմից Արխագիայի անկախության ճանաչումից հետո՝ 2008թ. սեպտեմբերի 17-ին կնքվեց «Գործընկերության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին համաձայ-

<sup>43</sup> **Toal G., O'Loughlin J.**, Inside South Ossetia: a survey of attitudes in a de facto state, *Post-Soviet Affairs*, 2013, **29**, 2, 136-172.

<sup>44</sup> **O'Loughlin J., Kolossov V., Toal G.**, Inside Abkhazia: Survey of Attitudes in a De Facto State, *Post-Soviet Affairs*, 2013, **27**, 1, 1-36.

նագիրը<sup>45</sup>», որի նպատակն, ի թիվս այլոց, տնտեսական ինտեգրման համար համապատասխան նախապայմանների ստեղծումն էր, որը ենթադրում էր առևտրատնտեսական ակտիվ համագործակցություն, էներգետիկ և տրանսպորտային համակարգերի միավորմանն ուղղված նախագծերի պատրաստում և այլն: Ավելին, համաձայնագրում նշվում էր, որ տնտեսական ինտեգրման արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևոր է նաև առևտրատնտեսական հարաբերություններում բարենպաստ ռեժիմների ներդրման խնդիրը, որոնք չպետք է լինեն պակաս բարենպաստ, քան ցանկացած այլ՝ երրորդ երկրի համար: Տնտեսական ինտեգրման հաջորդ կարևոր փուլը 2014թ. նոյեմբերի 24-ին Աբխազիայի և Ռուսաստանի միջև կնքված «Ռազմավարական գործընկերության մասին համաձայնագիրն<sup>46</sup>» է: Համաձայնագիրը որակապես նոր փուլ տեղափոխեց ռուս-աբխազական հարաբերությունները: Այն ենթադրում էր տարածաշրջանային անվտանգության ապահովում, փոխհամաձայնեցված արտաքին քաղաքականության իրականացում, ընդհանուր պաշտպանական, անվտանգության, սոցիալ-տնտեսական տարածքի ձևավորում, ինչպես նաև այնպիսի գործիքների կիրառում և քաղաքականության իրականացում, որոնք կնպաստեն Աբխազիայի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Հատկանշական է, որ համաձայնագիրը նաև նախատեսում է այնպիսի պայմանների ստեղծում, որոնք Աբխազիային թույլ կտան լիարժեքորեն մասնակցել հետխորհրդային տարածքի ինտեգրման գործընթացներին, ինչպես նաև անդամակցել այլ միջազգային կազմակերպությունների կամ միավորումների, որոնք ստեղծվել են Ռուսաստանի նախաձեռնությամբ կամ աջակցությամբ: Վերանշյալը ենթադրում է, որ Ռուսաստանը չի

<sup>45</sup> Договор о дружбе, сотрудничестве и взаимной помощи между Российской Федерацией и Республикой Абхазия, <http://www.kremlin.ru/supplement/200>, (10.11.2019).

<sup>46</sup> Договор между Российской Федерацией и Республикой Абхазия о союзнничестве и стратегическом партнерстве, <http://kremlin.ru/supplement/4783>, (10.11.2019).

բացառում Աբխազիայի անդամակցումը ԵԱՏՄ-ին, ավելին, պատրաստ է աջակցել այդ գործընթացում:

Ինչ վերաբերում է Հարավային Օսիայի և Աբխազիայի՝ ԵԱՏՄ անդամակցությանն ուղղված քայլերին, ապա պետք է փաստել, որ, այս ուղղությամբ առարկայական քայլեր չեն ձեռնարկվել՝ չնայած այն հանգամանքին, որ երկու չճանաչված պետություններն էլ մինչև ԵԱՏՄ-ի ստեղծումն անգամ Մաքսային միության անդամ դառնալու ցանկություն էին հայտնել:

Այսպիսով, Հարավային Կովկասի չճանաչված պետությունների պարագայում հնարավոր ինտեգրման նախագծեր չեն քննարկվում, սակայն նման նախագծերի վերաբերյալ քննարկումներն անգամ կարող են բավական կառուցողական ազդեցություն ունենալ հակամարտության կարգավորման գործընթացում: Ինտեգրման միավորումների հետ ակտիվ ու սերտ համագործակցությունը կարող է դրական ազդեցություն ունենալ հետագա բախումներն ու ռազմական գործողությունները կանխարգելելու, հետևյալ ֆիլիտային փուլի մարտահրավերների հաղթահարման տեսանկյունից, սակայն, չի կարող որոշիչ լինել միջազգային ճանաչման գործընթացում:

## **Եզրակացություն**

1. Ժամանակակից միջազգային հարաբերություններում չճանաչված պետությունների օրինակները բազմաթիվ են, դրանք ունեն մի շարք ընդհանրություններ և առանձնահատկություններ տարբեր գործոնների հետ կապված՝ ստեղծման համանման պայմաններ, աջակցություն արտաքին դերակատարներից, պետականաշինության ներքին ջանքեր, թշնամանքի բարձր մակարդակ ոչ միայն մետրոպոլիայի, այլ նաև, մասամբ, միջազգային հանրության կողմից, և այլն: Չճանաչված պետությունները հետևյալ ֆիլիտային փուլում բախվում են ոչ միայն քաղաքական խնդիրների (խոչընդոտներ միջազգային

ճանաչման գործընթացում), այլ նաև ունեն ռեսուրսների և աջակցության կարիք: Նման պայմաններում կարևոր է նաև միջազգային հանրության պատշաճ ուշադրությունն ու աջակցության հնարավորությունները ինտեգրման կամ ինտեգրման միավորումների հետ համագործակցության տարբեր ձևաչափերի ստեղծման ու ներգրավվման ճանապարհով: Տնտեսական զարգացածության ու կայունության ապահովման ճանապարհին չճանաչված պետությունները բախվում են լրացուցիչ բարդությունների՝ ֆինանսական, ռազմական բարդ իրավիճակ, քաղաքական համակարգի անկայունություն, փախստականների և ներքին տեղահանված անձանց խնդիրներ և այլն: Այս առումով առանցքային նշանակություն կարող է ունենալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական հեռանկարների բարելավումն ու համագործակցային մթնոլորտի ստեղծումը:

2. Չնայած Կոստվոյի կարգավիճակի որոշման գործընթացում առկա որոշակի բարդություններին, ԵՄ-ն Կոստվոյում 2008թ. սկսած դարձավ գլխավոր դերակատար՝ փորձելով հակամարտությունը կարգավորել այլընտրանքային միջոցներով և աստիճանական քայլերով: ԵՄ-ի երկարաժամկետ ռազմավարությունը ներառում է պետականաշինության ծրագիր, որն, ըստ էության, ժառանգություն է ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմից և ընդգրկում է մի շարք առանցքային ոլորտներ՝ օրենքի գերակայություն, մարդու իրավունքների պաշտպանություն, սերտ ֆինանսական և տնտեսական աջակցություն և այլն:

3. Թեև Կոստվոյի «եվրոպական ինտեգրման հեռանկարը» դեռևս շարունակում է աղոտ մնալ վիճարկվող կարգավիճակի պատճառով, իսկ Կոստվոն դեռ բավական հեռու է ԵՄ ինտեգրման գործընթացի նախապայման հանդիսացող Կոպենհագենյան չափանիշները բավարարելուց, այնուամենայնիվ ակտիվ երկխոսությունը շարունակվում է: Նույնիսկ կարճաժամկետ հեռանկարում կարգավիճակի խնդիրը (ինչպես ՄԱԿ-ի անդամ չհանդիսանալը, այնպես էլ ԵՄ որոշ պետությունների կողմից Կոստվոյի անկախության չճանաչման փաստը) չի կարող մի շարք

ոլորտներում ինտեգրման համար իրական խոչընդոտ հանդիսանալ: Այնուամենայնիվ, ԵՄ-Կոտվո սերտ համագործակցությունն ու ասոցացման մասին համաձայնագրի ստորագրումն իր ուրույն ազդեցությունն ունեցավ ոչ միայն Կոտվոյի՝ «եվրոպական հեռանկարի» վրա, այլև նաև միջազգային ճանաչման գործընթացում:

4. Թեև Հարավային Կովկասի չճանաչված պետությունների պարագայում հնարավոր ինտեգրման նախագծեր չեն քննարկվում, սակայն նման նախագծերի վերաբերյալ քննարկումներն անգամ կարող են բավական կառուցողական ազդեցություն ունենալ հակամարտության կարգավորման գործընթացում: Ինտեգրման միավորումների հետ ակտիվ ու սերտ համագործակցությունը կարող է դրական ազդեցություն ունենալ հետագա բխումներն ու ռազմական գործողությունները կանխարգելելու, հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերների հաղթահարման տեսանկյունից, ինչպես նաև կարող է որոշիչ լինել միջազգային ճանաչման գործընթացում:

## **Opportunities for International Integration of Non-Recognized States of the South Caucasus**

MARGARIT PETROSYAN

*Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Armenia*

The article examines the opportunities for integration of non-recognized states and the key factors influencing this process. An attempt is made to present the possibilities of integration of Nagorno Karabakh, South Ossetia and Abkhazia or the prospects of possible cooperation with integration units. The role and effectiveness of integration units in conflict prevention and settlement are still ambiguous and, in some instances, largely ineffective. However, an active and close cooperation with integration units may be effective in overcoming the challenges of the post-conflict phase. At the same time, it is highlighted that this is not a decisive factor for international recognition of non-recognized states. The article presents the features of Kosovo-EU active cooperation and possible integration process, its impact on the recognition process, as well as opportunities for applying the existing experience in de facto states of the South Caucasus.